

Համարը

Տիպը Կոնվենցիա

Սկզբնաղբյուրը ՀՀԱԳՆՊՏ 2016.11.09/2(36)

Ընդունող մարմինը Հայաստանի Հանրապետություն

Ստորագրող մարմինը

Վավերացնող մարմինը

Ուժի մեջ մտնելու ամսաթիվը 01.12.2016

Տեսակը Հիմնական

Կարգավիճակը Գործում է

Ընդունման վայրը Վարչակա

Ընդունման ամսաթիվը 16.05.2005

Ստորագրման ամսաթիվը 16.05.2005

Վավերացման ամսաթիվը

Ուժը կորցնելու ամսաթիվը

ԱՀԱԲԵԿԻՅԱՆ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՄԱՍԻՆ ԵՎՐՈՊԱՅԻ ԽՈՐՀՐԴԻ ԿՈՆՎԵՆՑԻԱ

Ահաբեկչության կանխարգելման մասին Եվրոպայի խորհրդի կոնվենցիա

Եվրոպայի խորհրդի անդամ Պետությունները և այլ ստորագրող Կողմերը,

հաշվի առնելով, որ Եվրոպայի խորհրդի նպատակն է հասնել իր անդամների առավելագույն համախմբման,

գիտակցելով սույն Կոնվենցիայի այլ Կողմերի հետ համագործակցությունն ամրապնդելու կարևորությունը,

ցանկանալով ձեռնարկել արդյունավետ միջոցներ՝ ահաբեկչությունը կանխելու և, մասնավորապես, հակազդելու հանրությանը՝ ահաբեկչական հանցագործություններ կատարել հրահրելուն և ահաբեկչական նպատակներով հավաքագրմանը և ուսուցմանը,

գիտակցելով ահաբեկչական հանցագործությունների աճի և ահաբեկչության սպառնալիքի ընդլայնման հետևանքով առաջացած խորին մտահոգությունը,

գիտակցելով այն վտանգավոր իրավիճակը, որում հայտնվել են ահաբեկչության վտանգի տակ գտնվող անձինք, և այդ կապակցությամբ վերահաստատելով իրենց խորին համերաշխությունը ահաբեկչության գոհերի և նրանց ընտանիքների հետ,

ընդունելով, որ ահաբեկչական հանցագործությունները և սույն Կոնվենցիայում նկարագրված հանցագործությունները, ում կողմից էլ դրանք կատարված լինեն, ոչ մի դեպքում չեն կարող արդարացվել քաղաքական, փիլիսոփայական, գաղափարախոսական, ռասայական, էթնիկական, կրոնական և նմանատիպ այլ բնույթի դատողություններով, և վերհիշելով բոլոր Կողմերի պարտավորությունը՝ կանխել նման հանցագործությունները, իսկ չկանխելու դեպքում՝ դատական կարգով հետապնդել և երաշխավորել, որ դրանք ենթարկվեն հանցագործությունների լրջությանը համարժեք պատժի,

վերհիշելով ահաբեկչության դեմ պայքարն ուժեղացնելու անհրաժեշտությունը և վերահաստատելով այն, որ ահաբեկչական հանցագործությունների կանխմանը կամ ճնշմանն ուղղված բոլոր միջոցները պետք է իրականացվեն օրենքի և ժողովրդավարական արժեքների, մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների, ինչպես նաև միջազգային օրենքի այլ դրույթների պահպանման նկատառումով՝ ներառելով, որտեղ կիրառելի է, միջազգային մարդասիրական օրենքը,

ընդունելով, որ սույն Կոնվենցիան նախատեսված չէ ազդել խոսքի ազատության և միավորումներ կազմելու ազատության հաստատված սկզբունքների վրա,

վերհիշելով, որ ահաբեկչական գործողություններն իրենց բնույթով կամ ենթատեքստով նպատակ են հետապնդում լրջորեն ահաբեկել բնակչությանը կամ ապօրինաբար հարկադրել կառավարությանը կամ միջազգային կազմակերպությանը կատարել կամ ձեռնպահ մնալ որևէ գործողություն կատարելուց կամ լրջորեն ապակայունացնել կամ ոչնչացնել երկրի կամ միջազգային կազմակերպության քաղաքական, սահմանադրական, տնտեսական կամ սոցիալական հիմնական կառույցները,

համաձայնեցին ներքոհիշյալի մասին.

Հոդված 1. Տերմինաբանություն

1. Սույն Կոնվենցիայի նպատակներով «ահաբեկչական հանցագործություն» նշանակում է՝ հավելվածում

նշված պայմանագրերից որևէ մեկի շրջանակներում և այնտեղ բնորոշված ցանկացած հանցագործություն:

2. Վավերագիրը, ընդունման, հաստատման կամ միանալու մասին փաստաթուղթն ի պահ հանձնելիս Պետությունը կամ Եվրոպական համայնքը, որը չի հանդիսանում հավելվածում նշված որևէ պայմանագրի կողմ, կարող է հայտարարել, որ սույն Կոնվենցիան շահագրգիռ Կողմի նկատմամբ կիրառելիս այդ պայմանագիրը չպետք է ներառվի հավելվածում: Այս հայտարարությունը պայմանագիրն ուժի մեջ մտնելու պահից պետք է դադարի գործել այդպիսի հայտարարություն արած Կողմի համար, որը պետք է ծանուցի Եվրոպայի խորհրդի Գլխավոր քարտուղարին նրա ուժի մեջ մտնելու մասին:

Հոդված 2. Նպատակը

Սույն Կոնվենցիայի նպատակն է նպաստել ահաբեկչության կանխարգելմանն ուղղված Կողմերի ջանքերին՝ ահաբեկչության և մարդու իրավունքների, մասնավորապես կյանքի իրավունքի վրա դրա բացասական հետևանքները կանխելու նպատակով, թե՛ ազգային, թե՛ միջազգային համագործակցության մակարդակում ձեռնարկվող քայլերի միջոցով՝ հաշվի առնելով Կողմերի միջև առկա բազմակողմ կամ երկկողմ պայմանագրերը և համաձայնագրերը:

Հոդված 3. Կանխարգելման ազգային քաղաքականություն

1. Յուրաքանչյուր Կողմ պետք է համապատասխան քայլեր ձեռնարկի, մասնավորապես իրավապահ և այլ մարմինների աշխատակիցների վերապատրաստման բնագավառում, ինչպես նաև կրթության, մշակույթի, տեղեկատվության, մամուլի և հասարակական գիտակցության բարձրացման բնագավառներում՝ նպատակ ունենալով կանխել ահաբեկչական հանցագործությունները և դրանց բացասական հետևանքները՝ հարգելով «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» կոնվենցիայում, «Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին» միջազգային դաշնագրում շարադրված, երբ նշվածը կիրառելի է այդ Կողմի նկատմամբ, մարդու իրավունքների վերաբերյալ պարտավորությունները և միջազգային իրավունքով նախատեսված այլ պարտավորությունները:

2. Յուրաքանչյուր Կողմ պետք է քայլեր ձեռնարկի, որոնք կարող են անհրաժեշտ լինել ահաբեկչական հանցագործությունները և դրանց բացասական հետևանքները կանխելու նպատակով ազգային մարմինների միջև համագործակցությունը զարգացնելու և խորացնելու համար, մասնավորապես՝

- ա) տեղեկատվության փոխանակում,
- բ) անձանց և շինությունների ֆիզիկական պաշտպանության կատարելագործում,
- գ) քաղաքացիական արտակարգ իրավիճակների համար վերապատրաստման և համակարգման ծրագրերի կատարելագործում:

3. Յուրաքանչյուր Կողմ պետք է նպաստի հանդուրժողականությանը՝ խրախուսելով միջկրոնական և միջմշակութային երկխոսությունը, ներգրավելով, համապատասխան դեպքերում, հասարակական կազմակերպությունները և քաղաքացիական հասարակության այլ տարրերը՝ նպատակ ունենալով կանխել լարվածությունը, որը կարող է նպաստել ահաբեկչական հանցագործությունների իրականացմանը:

4. Յուրաքանչյուր Կողմ պետք է ջանքեր գործադրի ահաբեկչական հանցագործությունների և սույն Կոնվենցիայում շարադրված այլ հանցագործությունների հետևանքով առաջացող սպառնալիքի առկայության, պատճառների և կարևորության նկատմամբ հանրային գիտակցության բարձրացման ուղղությամբ և պետք է խրախուսի իր հանրությանը անհրաժեշտ իրական օգնություն տրամադրել իր իրավասու մարմիններին, ինչը կարող է նպաստավոր լինել ահաբեկչական հանցագործությունների և սույն Կոնվենցիայում շարադրված այլ հանցագործությունների կանխման համար:

Հոդված 4. Միջազգային համագործակցություն կանխարգելման ուղղությամբ

Կողմերը, համապատասխան դեպքերում և իրենց կարողություններին համապատասխան, պետք է աջակցեն միմյանց՝ ուժեղացնելու համար ահաբեկչական հանցագործությունների իրականացումը կանխարգելելու իրենց ներուժը՝ ներառյալ տեղեկատվության և լավագույն փորձերի փոխանակման, ինչպես նաև վերապատրաստման և կանխարգելիչ բնույթ կրող այլ համատեղ նախաձեռնությունների միջոցով:

Հոդված 5. Ահաբեկչական հանցագործություն կատարելուն ուղղված հանրային սադրանք

1. Սույն Կոնվենցիայի նպատակներով «հանրությանը՝ ահաբեկչական հանցագործություններ կատարելու հրահրելուն» նշանակում է՝ հանրության շրջանում ահաբեկչական հանցագործություններ կատարել դրդելուն:

ուղղված տեղեկատվության տարածում կամ այլ միջոցներով ուղերձը հանրությանը մատչելի դարձնելուն՝ այն դեպքում, երբ նման գործողությունները, անմիջականորեն կամ ինքնաբերաբար պաշտպանելով ահաբեկչական հանցագործությունները, մեկ կամ ավելի նման հանցագործությունների կատարման վտանգ է առաջացնում:

2. Յուրաքանչյուր Կողմ պետք է ընդունի այնպիսի միջոցներ, որոնք կարող են անհրաժեշտ լինել 1-ին կետում նշված՝ ապօրինի և միտումնավոր ահաբեկչական հանցագործություն կատարելուն ուղղված հանրային սադրանքը իր ազգային օրենսդրությամբ քրեական իրավախախտում ճանաչելու համար:

Հոդված 6. Ահաբեկչության համար հավաքագրում

1. Սույն Կոնվենցիայի նպատակներով «ահաբեկչական նպատակներով հավաքագրում» նշանակում է՝ դրդել այլ անձի կատարել կամ մասնակցել ահաբեկչական հանցագործության կատարմանը կամ անդամակցել միության կամ խմբի՝ ահաբեկչական մեկ կամ ավելի հանցագործությունների կատարմանն աջակցելու նպատակով:

2. Յուրաքանչյուր Կողմ պետք է ընդունի այնպիսի միջոցներ, որոնք կարող են անհրաժեշտ լինել 1-ին կետում նշված ահաբեկչական նպատակներով ապօրինի և միտումնավոր հավաքագրումը իր ազգային օրենսդրությամբ քրեական իրավախախտում ճանաչելու համար:

Հոդված 7. Ահաբեկչության համար նախապատրաստում

1. Սույն Կոնվենցիայի նպատակներով «ահաբեկչության համար նախապատրաստում» նշանակում է՝ ահաբեկչական հանցագործությունների իրականացման կամ աջակցության նպատակով պայթուցիկ նյութերի, հրձիգների կամ այլ զենքերի, թունավոր կամ վտանգավոր նյութերի պատրաստման կամ օգտագործման, տեխնիկայի կամ այլ հատուկ մեթոդների վերաբերյալ հրահանգների տրամադրում՝ գիտակցելով, որ տրամադրվող տեղեկատվությունն ուղղված է սովյալ նպատակի իրականացմանը:

2. Յուրաքանչյուր Կողմ պետք է ընդունի այնպիսի միջոցներ, որոնք կարող են անհրաժեշտ լինել՝ ճանաչելու ապօրինի և միտումնավոր կատարված ահաբեկչության նախապատրաստումը, ինչպես նշված է 1-ին կետում, որպես քրեական հանցագործություն իր ազգային օրենսդրությամբ:

Հոդված 8. Ահաբեկչական հանցագործության կատարման ոչ պարտադիր լինելը

Գործողությունը որպես սույն Կոնվենցիայի 5-7-րդ հոդվածներում նշված հանցագործություն սահմանելու համար անհրաժեշտ չէ, որ ահաբեկչական հանցագործությունը փաստացի կատարված լինի:

Հոդված 9. Օժանդակ հանցագործություններ

1. Յուրաքանչյուր Կողմ պետք է ձեռնարկի այնպիսի միջոցներ, որոնք կարող են անհրաժեշտ լինել հետևյալ գործողությունները ազգային օրենսդրությամբ որպես քրեական հանցագործություն ճանաչելու համար.

ա) սույն Կոնվենցիայի 5-7-րդ հոդվածներում հիշատակված հանցագործությանը հանցակից լինելը,

բ) սույն Կոնվենցիայի 5-7-րդ հոդվածներում հիշատակված հանցագործության կազմակերպումը կամ այլ անձանց ուղղորդումը,

գ) սույն Կոնվենցիայի 5-7-րդ հոդվածներում հիշատակված ընդհանուր նպատակով գործող անձանց խմբի կողմից մեկ կամ ավելի հանցագործությունների իրականացմանն աջակցումը: Նման աջակցությունը պետք է լինի դիտավորյալ /կամ կանխամտածված/ և.

- պետք է կատարված լինի խմբի հանցավոր գործունեության կամ հանցավոր նպատակների ծավալման նպատակով, երբ նման գործունեությունը կամ նպատակը ներառում է սույն Կոնվենցիայի 5-7-րդ հոդվածներում հիշատակված հանցագործության իրականացում, կամ

- պետք է կատարված լինի խմբի կողմից սույն Կոնվենցիայի 5-7-րդ հոդվածներում հիշատակված հանցագործությունն իրականացնելու դիտավորյալ վերաբերյալ իրազեկված լինելով:

2. Յուրաքանչյուր Կողմ պետք է ընդունի այնպիսի միջոցներ, որոնք կարող են անհրաժեշտ լինել 6-րդ և 7-րդ հոդվածներում հիշատակված հանցագործություն կատարելու փորձը իր ազգային օրենսդրությամբ կամ դրան համապատասխան քրեական հանցագործություն ճանաչելու համար:

Հոդված 10. Իրավաբանական անձանց պատասխանատվությունը

1. Յուրաքանչյուր Կողմ պետք է ընդունի այնպիսի միջոցներ, որոնք կարող են անհրաժեշտ լինել, իր իրավական սկզբունքներին համապատասխան, սույն Կոնվենցիայի 5-7-րդ և 9-րդ հոդվածներում հիշատակված հանցագործություններին մասնակցելու համար իրավաբանական անձանց պատասխանատվությունը սահմանելու համար:

2. Համաձայն Կողմի իրավական սկզբունքներին՝ իրավաբանական անձանց պատասխանատվությունը կարող է լինել քրեական, քաղաքացիական կամ վարչական:

3. Նման պատասխանատվությունը չպետք է ազդի հանցագործություններ կատարած ֆիզիկական անձանց քրեական պատասխանատվության վրա:

Հոդված 11. Սանկցիաներ և միջոցներ

1. Յուրաքանչյուր Կողմ պետք է ընդունի այնպիսի միջոցներ, որոնք կարող են անհրաժեշտ լինել սույն Կոնվենցիայի 5-7-րդ և 9-րդ հոդվածներում հիշատակված հանցագործությունների դեպքում արդյունավետ, համարժեք և համոզիչ պատժամիջոցներ կիրառելու համար:

2. Սույն Կոնվենցիայում հիշատակված հանցագործությունների համար արտասահմանյան պետություններում հրապարակված նախորդ վերջնական մեղադրանքները, որքանով թույլ է տալիս ազգային օրենքը, կարող են դատավճռի որոշման նպատակով հաշվի առնվել ազգային օրենքի շրջանակներում:

3. Յուրաքանչյուր Կողմ պետք է երաշխավորի, որ 10-րդ հոդվածին համապատասխան պատասխանատվություն կրող իրավաբանական անձինք ենթարկվեն արդյունավետ, համարժեք և համոզիչ քրեական և ոչ քրեական սանկցիաների՝ ներառյալ դրամական սանկցիաները:

Հոդված 12. Պայմաններ և երաշխիքներ

1. Յուրաքանչյուր Կողմ պետք է երաշխավորի, որ սույն Կոնվենցիայի 5-7-րդ և 9-րդ հոդվածների համաձայն քրեական պատասխանատվության սահմանումը, իրականացումը և կիրառումն իրականացվեն՝ հարգելով մարդու իրավունքներին առնչվող պարտավորությունները « մասնավորապես խոսքի ազատության, միավորումներ կազմելու ազատության և դավանանքի ազատության իրավունքը՝ սահմանված, երբ կիրառելի են այդ Կողմի նկատմամբ, «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» կոնվենցիայում, «Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին» միջազգային դաշնագրում, ինչպես նաև այլ պարտավորությունները՝ միջազգային իրավունքին համապատասխան:

2. Սույն Կոնվենցիայի 5-7-րդ և 9-րդ հոդվածների համաձայն քրեական պատասխանատվության սահմանումը, իրականացումը և կիրառումը պետք է նաև ենթարկվեն համարժեքության սկզբունքին՝ հետևելով օրինական նպատակներին և դրանց անհրաժեշտությանը ժողովրդավարական հասարակությունում՝ բացառելով կանայականության կամ խտրականության կամ ռասիստական ցանկացած դրսևորում:

Հոդված 13. Ահաբեկչության գոհերի պաշտպանությունը, փոխհատուցումը և աջակցությունը

Յուրաքանչյուր Կողմ պետք է ընդունի այնպիսի միջոցներ, որոնք կարող են անհրաժեշտ լինել իր սեփական տարածքում կատարված ահաբեկչության գոհերին պաշտպանելու և աջակցելու համար: Այդ միջոցները, համապատասխան ազգային համակարգերի միջոցով և ներպետական օրենսդրության համաձայն, կարող են ներառել, *inter alia*, ահաբեկչությանը զոհ դարձած անձանց և նրանց ընտանիքների անդամներին ֆինանսական աջակցությունը և փոխհատուցումը:

Հոդված 14. Իրավասություն

1. Յուրաքանչյուր Կողմ պետք է ձեռնարկի այնպիսի միջոցներ, որոնք կարող են անհրաժեշտ լինել սույն Կոնվենցիայում հիշատակված հանցագործությունների նկատմամբ իր իրավասությունը սահմանելու համար.

ա) երբ հանցագործությունը կատարվում է այդ Կողմի տարածքում,

բ) երբ հանցագործությունը կատարվում է տվյալ Կողմի դրոշմ կրող նավի վրա կամ տվյալ Կողմի օրենքների շրջանակներում գրանցված օդանավում,

գ) երբ հանցագործությունը կատարվում է տվյալ Կողմի քաղաքացու կողմից:

2. Յուրաքանչյուր Կողմ կարող է նաև իր իրավասությունը սահմանել սույն Կոնվենցիայում հիշատակված հանցագործությունների նկատմամբ.

ա) երբ հանցագործությունն ուղղված է եղել, կամ որի արդյունքն է եղել սույն Կոնվենցիայի 1-ին հոդվածում նշված հանցագործության իրականացումը այդ Կողմի տարածքում կամ Կողմի քաղաքացու նկատմամբ,

բ) երբ հանցագործությունն ուղղված է եղել, կամ որի արդյունքն է եղել սույն Կոնվենցիայի 1-ին հոդվածում նշված հանցագործության կատարումն արտասահմանում՝ այդ Կողմի պետական կամ կառավարական հաստատությունների դեմ, ներառյալ այդ Կողմի դիվանագիտական կամ հյուպատոսական տարածքները,

գ) երբ հանցագործությունն ուղղված է եղել, կամ որի արդյունքն է եղել սույն Կոնվենցիայի 1-ին հոդվածում նշված հանցագործության կատարումը, որն իրականացվել է սլվյալ Կողմին գործողություն կատարելու կամ այն կատարելուց ձեռնպահ մնալ հարկադրելու փորձի միջոցով,

դ) երբ հանցագործությունը կատարվում է քաղաքացիություն չունեցող անձի կողմից, որը մշտապես բնակվում է այդ Կողմի տարածքում,

ե) երբ հանցագործությունը կատարվել է Կողմի կառավարության կողմից շահագործվող օդանավում:

3. Յուրաքանչյուր Կողմ պետք է ձեռնարկի այնպիսի միջոցներ, որոնք կարող են անհրաժեշտ լինել սույն Կոնվենցիայում հիշատակված հանցագործությունների նկատմամբ իր իրավասությունը սահմանելու համար այն դեպքերում, երբ հավանական հանցագործը գտնվում է իր տարածքում, և ինքը չի հանձնում նրան այն Կողմին, որի իրավասությունը հիմնված է հարցում ստացած Կողմի օրենքի հետ հավասար ձևով գոյություն ունեցող իրավասության կանոնների վրա:

4. Սույն Կոնվենցիան չի բացառում ազգային օրենքին համապատասխան կիրառվող որևէ քրեական իրավասություն:

5. Երբ մեկից ավելի Կողմեր պահանջում են իրենց իրավասությունը տարածել սույն Կոնվենցիայում հիշատակված հավանական հանցագործության վրա, ներգրավված Կողմերը համապատասխան դեպքերում պետք է խորհրդակցեն՝ դատավարությանն առավել համապատասխան իրավասությունը սահմանելու նպատակով:

Հոդված 15. Հետաքննության պարտավորություն

1. Ստանալով տեղեկատվություն այն մասին, որ անձը, որը կատարել է սույն Կոնվենցիայում հիշատակված հանցագործություն կամ կասկածվում է այն կատարելու մեջ, կարող է գտնվել իր տարածքում, Կողմը պետք է ձեռնարկի այնպիսի միջոցներ, որոնք կարող են անհրաժեշտ լինել տեղեկատվության մեջ պարունակվող փաստերը ներպետական օրենքի ներքո հետաքննելու համար:

2. Համոզվելով հանգամանքների հիմնավորվածության մեջ՝ այն Կողմը, որի տարածքում գտնվում է հանցագործը կամ կասկածյալը, պետք է, ազգային օրենսդրության համաձայն, ձեռնարկի համապատասխան միջոցներ՝ հետաքննության կամ հանձնման նպատակով այդ անձի ներկայությունը երաշխավորելու համար:

3. Յուրաքանչյուր անձ, ում նկատմամբ ձեռնարկվել են 2-րդ կետում հիշատակված միջոցները, պետք է իրավունք ունենա.

ա) անհապաղ կապվելու այն Պետության համապատասխան մոտակա ներկայացուցչության հետ, որի քաղաքացին է ինքը, կամ որը, այլ կերպ, իրավունք ունի պաշտպանելու իր իրավունքները, կամ եթե այդ անձը քաղաքացիություն չունի, այն Պետության հետ, որի տարածքում մշտապես բնակվում է,

բ) որ իրեն այցելեն այդ Պետության ներկայացուցիչները,

գ) տեղեկանալու «ա» և «բ» ենթակետերում նշված այդ անձանց իրավունքների մասին:

4. 3-րդ կետում նշված իրավունքները պետք է իրականացվեն այն Կողմի օրենքներին և կանոնակարգերին համապատասխան, որի տարածքում գտնվում է հանցագործը կամ կասկածյալը՝ պայմանով, որ այդ օրենքները և կանոնակարգերը պետք է լիովին օգտագործվեն այն նպատակների համար, որոնց ուղղված են 3-րդ կետում նշված իրավունքները:

5. 3-րդ և 4-րդ դրույթները չպետք է խախտեն 14-րդ հոդվածի 1.գ և 2.դ ենթակետերին համապատասխան իր իրավասության մասին հայտնած յուրաքանչյուր Կողմի՝ հավանական հանցագործի հետ շփվելու և այցելելու նպատակով Կարմիր խաչի միջազգային կոմիտեին հրավիրելու իրավունքը:

Հոդված 16. Կոնվենցիան չկիրառելը

Սույն Կոնվենցիան չպետք է կիրառվի այն դեպքում, երբ 5-7-րդ և 9-րդ հոդվածներում նշված հանցագործությունները կատարվում են միևնույն Պետությունում, կասկածվող հանցագործը հանդիսանում է տվյալ Պետության քաղաքացի և գտնվում է տվյալ Պետության տարածքում, իսկ մեկ այլ Պետություն հիմք չունի սույն Կոնվենցիայի 14-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերի համաձայն իրականացնելու իր իրավասությունը, և հասկանալի է, որ նման դեպքերում պետք է կիրառվեն սույն Կոնվենցիայի 17-րդ, 20-22-րդ հոդվածների դրույթները:

Հոդված 17. Միջազգային համագործակցությունը քրեական գործերով

1. Կողմերը պետք է ցուցաբերեն փոխադարձ առավելագույն աջակցություն սույն Կոնվենցիայի 5-7-րդ և 9-րդ հոդվածներում նշված հանցագործությունների քրեական հետաքննությունների կամ հանձնման ընթացակարգերի առումով՝ ներառյալ աջակցությունը դատավարության անցկացման համար անհրաժեշտ և միմյանց մոտ առկա ապացույցներն ստանալու գործում:

2. Կողմերը պետք է իրականացնեն 1-ին կետում նշված իրենց պարտավորությունները՝ իրենց միջև առկա՝ փոխադարձ իրավական օգնության մասին ցանկացած պայմանագրի կամ այլ համաձայնագրի համապատասխան: Նման պայմանագրերի կամ համաձայնագրերի բացակայության դեպքում Կողմերը պետք է միմյանց աջակցություն ցուցաբերեն իրենց ազգային օրենքին համապատասխան:

3. Կողմերը պետք է առավելագույնս համագործակցեն միմյանց հետ, հարցում ստացած Կողմի համապատասխան օրենքի, պայմանագրերի, համաձայնագրերի, պայմանավորվածությունների համաձայն, այն հանցագործությունների քրեական հետաքննությունների կամ դատավարության հարցում, որոնց համար իրավաբանական անձը հարցում ներկայացրած Կողմում կարող է պատասխանատվություն կրել՝ սույն Կոնվենցիայի 10-րդ հոդվածի համաձայն:

4. Յուրաքանչյուր Կողմ կարող է դիտարկել լրացուցիչ մեխանիզմների սահմանումը, 10-րդ հոդվածի համաձայն, քրեական, քաղաքացիական կամ վարչական պատասխանատվություն սահմանելու համար անհրաժեշտ տեղեկատվությունը կամ ապացույցները այլ Կողմերի հետ փոխանակելու նպատակով:

Հոդված 18. Հանձնում կամ դատական կարգով հետապնդում

1. Կողմը, որի տարածքում գտնվում է կասկածյալ հանցագործը, պարտավոր է, 14-րդ հոդվածին համապատասխան, իրավասության առկայության դեպքում, եթե այն այդ անձին չի հանձնում, առանց բացառության, անկախ այն հանգամանքից՝ հանցագործությունը կատարվել է իր տարածքում, թե ոչ, առանց որևէ հետաձգման գործը հանձնել իրավասու մարմիններին՝ դատական կարգով հետապնդելու նպատակով, իրականացնելով այդ Կողմի օրենքներին համապատասխան դատավարություն: Այդ մարմինները պետք է կայացնեն իրենց որոշումներն այնպես, ինչպես տվյալ Կողմի օրենքի ներքո՝ լուրջ բնույթի ցանկացած այլ հանցագործության դեպքում:

2. Այն դեպքում, երբ Կողմին թույլատրվում է իր ազգային օրենքի ներքո հանձնել կամ այլ կերպ փոխանցել իր քաղաքացիներից մեկին միայն այն պայմանով, որ այդ անձը կվերադարձվի հանձնող Կողմին հայցման առարկա դատավարության կամ հետապնդման արդյունքում կայացված դատապատիժը կրելու համար, և՛ այս Կողմը, և՛ անձի հանձնումը հայցող Կողմը կհամաձայնեն այս տարբերակին և իրենց կողմից ընդունելի համարվող այլ պայմաններին. նման պայմանական հանձնումը կամ փոխանցումը բավարար է 1-ին կետում նշված պարտավորությունից ազատելու համար:

Հոդված 19. Հանձնում

1. Սույն Կոնվենցիայի 5-7-րդ և 9-րդ հոդվածներում նշված հանցագործությունները Կողմերի միջև առկա՝ հանձնման մասին պայմանագրում պետք է ներառվեն որպես հանձնում պահանջող հանցագործություններ՝ մինչև սույն Կոնվենցիայի ուժի մեջ մտնելը: Կողմերը պարտավորվում են նման հանցագործությունները, որպես հանձնում պահանջող հանցագործություններ, հետագայում ընդգրկել իրենց միջև կնքվելիք հանձնման վերաբերյալ ցանկացած համաձայնագրում:

2. Երբ Կողմը, որը հանձնումը պայմանավորում է պայմանագրի արկայությամբ, ստանում է հանձնման հարցում այլ Կողմից, որի հետ չունի հանձնման վերաբերյալ պայմանագիր, հարցում ստացած Կողմը կարող է, եթե այդպես որոշի, սույն Կոնվենցիան համարել որպես հանձնման հիմք սույն Կոնվենցիայի 5-7-րդ և 9-րդ հոդվածներում նշված հանցագործությունների դեպքում: Հանձնումը պետք է ենթակա լինի հարցում ստացած Կողմի օրենքով նախատեսված այլ պայմանների:

3. Կողմերը, որոնք հանձնումը չեն պայմանավորում պայմանագրի արկայությամբ, պետք է ճանաչեն 5-7-րդ և 9-րդ հոդվածներում նշված իրավախախտումները որպես հանձնում ենթադրող իրավախախտումներ, որոնք ենթակա կլինեն հարցում ստացած Կողմի օրենքով նախատեսված այլ պայմանների:

4. Անհրաժեշտության դեպքում Կողմերի միջև հանձնման նպատակներն իրականացնելու համար սույն Կոնվենցիայի 5-7-րդ և 9-րդ հոդվածներում նշված հանցագործությունները պետք է դիտվեն այնպես, իբրև թե դրանք կատարվել են ոչ միայն այն վայրում, որտեղ տեղի են ունեցել, այլև 14-րդ հոդվածին համապատասխան իրավասություն սահմանած Կողմերի տարածքներում:

5. Կողմերի միջև կնքված՝ հանձնման վերաբերյալ բոլոր պայմանագրերի և համաձայնագրերի դրույթները, կապված սույն Կոնվենցիայի 5-7-րդ և 9-րդ հոդվածներում նշված հանցագործությունների հետ, պետք է Կողմերի միջև համարվեն փոփոխման ենթակա այն չափով, որքանով դրանք չեն համապատասխանում սույն Կոնվենցիային:

Հոդված 20. Քաղաքական դրդապատճառների բացառման վերաբերյալ հոդվածը չկիրառելը

1. Սույն Կոնվենցիայի 5-7-րդ և 9-րդ հոդվածներում նշված հանցագործություններից ոչ մեկը չպետք է հանձնման կամ փոխադարձ օգնության նպատակներով դիտվի որպես քաղաքական հանցագործություն, քաղաքական հանցագործության հետ կապված հանցագործություն կամ քաղաքական դրդապատճառներից առաջացած հանցագործություն: Հետևաբար, նմանատիպ հանցագործության վրա հիմնված՝ հանձնման կամ փոխադարձ աջակցության վերաբերյալ խնդրանքը չի կարող մերժվել միայն այն պատճառով, որ այն վերաբերում է քաղաքական հանցագործությանը կամ քաղաքական հանցագործության հետ կապված հանցագործությանը կամ քաղաքական դրդապատճառներից առաջացած հանցագործությանը:

2. Չխախտելով 1969թ. մայիսի 23-ի «Միջազգային պայմանագրերի իրավունքի մասին» Վիեննայի կոնվենցիայի 19-20-րդ հոդվածների կիրառելիությունը սույն Կոնվենցիայի այլ հոդվածների նկատմամբ՝ յուրաքանչյուր Պետություն կամ Եվրոպական համայնքը կարող է ստորագրման, ինչպես նաև վավերացման, ընդունման, հաստատման կամ սույն Կոնվենցիային միանալու մասին փաստաթղթերն ի պահ հանձնելիս հայտարարել, որ ինքն իրեն իրավունք է վերապահում չկիրառելու սույն հոդվածի 1-ին կետը, եթե այն վերաբերում է սույն Կոնվենցիայում նշված հանցագործության համար հանձնմանը: Կողմը պարտավորվում է կիրառել սույն վերապահումը առանձին դեպքերի քննության միջոցով՝ ընդունելով պատշաճ հիմնավորմամբ որոշում:

3. Յուրաքանչյուր Կողմ կարող է ամբողջովին կամ մասամբ հետ վերցնել 2-րդ կետի համաձայն արած իր վերապահումը Եվրոպայի խորհրդի Գլխավոր քարտուղարին ուղարկվող հայտարարագրի միջոցով, որը համարվում է ուժի մեջ մտած ստացման օրվանից:

4. Կողմը, որը վերապահում է արել սույն հոդվածի 2-րդ կետի համաձայն, չի կարող ցանկացած այլ Կողմից պահանջել սույն հոդվածի 1-ին կետի կիրառումը: Այնուամենայնիվ, նա կարող է, եթե իր վերապահումը մասնակի է կամ պայմանական, պահանջել սույն հոդվածի կիրառումը այն չափով, որքանով ինքը՝ Կողմը, ընդունել է այն:

5. Վերապահումը պետք է շահագրգիռ Կողմի նկատմամբ ուժի մեջ մնա սույն Կոնվենցիայի ուժի մեջ մտնելու օրվանից երեք տարվա ընթացքում: Այնուամենայնիվ, նման վերապահումը կարող է երկարացվել նույն ժամկետով:

6. Վերապահումը դադարեցնելու օրվանից 12 ամիս առաջ Եվրոպայի խորհրդի Գլխավոր քարտուղարը պետք է շահագրգիռ Կողմին ծանուցի դադարեցման մասին: Դադարեցման օրվանից ոչ ուշ, քան երեք ամիս առաջ Կողմը պետք է Եվրոպայի խորհրդի Գլխավոր քարտուղարին տեղեկացնի, որ ինքը պահպանում է, փոփոխում է կամ հետ է վերցնում իր վերապահումը: Եթե Կողմը Եվրոպայի խորհրդի Գլխավոր քարտուղարին տեղեկացնում է, որ ինքը պահպանում է իր վերապահումը, նա պետք է ներկայացնի դրա գործողության շարունակությունն արդարացնող բավարար հիմքեր: Շահագրգիռ Կողմի ծանուցման բացակայության դեպքում Եվրոպայի խորհրդի Գլխավոր քարտուղարը պետք է տեղեկացնի այդ Կողմին, որ նրա վերապահման գործողությունը համարվում է ինքնաբերաբար երկարացված վեց ամիս ժամկետով: Եթե այդ ժամկետը լրանալուց հետո շահագրգիռ Կողմը չի տեղեկացնում վերապահումը պահպանելու կամ փոփոխելու մտադրության մասին, ապա համարվում է վերապահումն ուժը կորցրել է:

7. Եթե Կողմը, այլ Կողմից ստանալով հանձնման մասին հարցում, անձին չի հանձնում սույն վերապահումը կիրառելու հիմքերով, նա պետք է, առանց որևէ բացառության և անտեղի հետաձգման, գործը հանձնի իրավասու մարմիններին՝ դատական կարգով հետապնդելու նպատակով, եթե հարցում ներկայացրած և հարցում ստացած Կողմերը այլ համաձայնության չեն եկել: Իրավասու մարմինները հարցում ստացած Կողմում դատական կարգով հետապնդում իրականացնելու նպատակով պետք է ընդունեն իրենց որոշումը նույն կերպով, ինչպես ծանր բնույթի ցանկացած հանցագործության դեպքում՝ այդ Կողմի օրենքներին համաձայն: Հարցում ստացած Կողմը, առանց անտեղի հետաձգման, պետք է հայտնի դատավարության գործընթացի վերջնական արդյունքների մասին հարցում կատարող Կողմին և Եվրոպայի խորհրդի Գլխավոր քարտուղարին, որն այն պետք է փոխանցի 30-րդ հոդվածով նախատեսված Կողմերի խորհրդակցությանը:

8. Այս վերապահման հիման վրա հանձնման մասին խնդրանքը մերժելու վերաբերյալ որոշումը պետք է պատշաճ կերպով ուղղվի հարցում ներկայացրած Կողմին: Եթե, 7-րդ կետի համաձայն, ողջամիտ ժամկետում հարցում ստացած Կողմում գործով չի ընդունվում, ըստ էության, դատական որոշում, հարցում ներկայացրած Կողմը կարող է այս փաստը ներկայացնել Եվրոպայի խորհրդի Գլխավոր քարտուղարին, որը պետք է այս գործը հանձնի 30-րդ հոդվածում նշված Կողմերի խորհրդակցությանը: Նշված խորհրդակցությունը պետք է ուսումնասիրի գործը, կարծիք հայտնի մերժման՝ Կոնվենցիային համապատասխանության մասին և այն հանձնի Նախարարների կոմիտեին գործի վերաբերյալ հետագա հայտարարության հրապարակման նպատակով: Սույն կետի համաձայն իր գործառույթներն իրականացնելիս Նախարարների կոմիտեն պետք է հանդիպի Կողմ Պետություններով սահմանափակվող կազմով:

Հոդված 21. Խտրականության վերաբերյալ պայմանը

1. Սույն Կոնվենցիայում ոչինչ չպետք է մեկնաբանվի որպես հանձնելու կամ փոխադարձ իրավական օգնություն տրամադրելու պարտավորություն, եթե հարցում ստացած Կողմը կարևոր հիմքեր ունի ենթադրելու, որ 5-7-րդ և 9-րդ հոդվածներում նշված հանցագործությունների համար հանձնման կամ նման հանցագործությունների վերաբերյալ փոխադարձ իրավական օգնության հարցումը արվել են անձին դատական կարգով հետապնդելու կամ պատժելու նպատակով՝ այդ անձի ռասայական, կրոնական, քաղաքացիական, էթնիկ պատկանելության կամ քաղաքական կարծիքի հիման վրա, կամ եթե հարցման բավարարումը կվատթարացնի անձի վիճակը այս պատճառներից յուրաքանչյուրի առկայության դեպքում:

2. Սույն Կոնվենցիայում ոչինչ չպետք է մեկնաբանվի որպես հանձնելու պարտավորություն, եթե անձին, որը հանդիսանում է հանձնման խնդրանքի սուբյեկտ, խոշտանգումների կամ անմարդկային կամ ստորացնող վերաբերմունքի կամ պատժի վտանգ է սպառնում:

3. Սույն Կոնվենցիայում ոչինչ չպետք է մեկնաբանվի որպես հանձնելու պարտավորություն, եթե հանձնման խնդրանքի սուբյեկտ հանդիսացող անձին մահապատժի վտանգ է սպառնում, կամ եթե հարցում ստացած Կողմի օրենքը չի նախատեսում ցմահ բանտարկություն, սպառնում է ցմահ բանտարկություն՝ առանց պայմանական վաղաժամ ազատ արձակման հնարավորության, բացառությամբ այն դեպքերի, երբ հարցում ստացած Կողմը հանձնման վերաբերյալ համապատասխան պայմանագրերի ներքո պարտավոր է հանձնել, և եթե հարցում ներկայացրած Կողմը բավարար երաշխիքներ է ներկայացնում հարցվող Կողմին առ այն, որ հարցում ստացած Կողմը չի դատապարտի մահապատժի կամ դատապարտելու դեպքում չի կիրառի այն, կամ տվյալ անձը չի դատապարտվի ցմահ բանտարկության՝ առանց վաղաժամ ազատ արձակվելու հնարավորության:

Հոդված 22. Անմիջական տեղեկատվություն

1. Առանց խախտելու իրենց սեփական հետաքննությունները կամ դատավարությունները՝ Կողմի իրավասու մարմինները կարող են, առանց նախնական հարցման, այլ Կողմի իրավասու մարմիններին փոխանցել սեփական հետաքննությունների արդյունքում ստացված տեղեկատվությունը, երբ նրանք համարում են, որ նման տեղեկատվության հրապարակումը կարող է տեղեկատվություն ստացող Կողմին օգնել հետաքննություն կամ դատավարություն նախաձեռնելու կամ իրականացնելու գործում կամ կարող է հանգեցնել այդ Կողմի պահանջի ներկայացմանը՝ սույն Կոնվենցիայի համաձայն:

2. Տեղեկատվություն տրամադրող Կողմը կարող է, իր ազգային օրենքին համապատասխան, պայմաններ ներկայացնել տեղեկատվություն ստացող Կողմին նմանատիպ տեղեկատվության օգտագործման վերաբերյալ:

3. Տեղեկատվություն ստացող Կողմը պետք է պարտավորություն ստանձնի այդ պայմանների համար:

4. Այնուամենայնիվ, ցանկացած Կողմ ցանկացած ժամանակ կարող է Եվրոպայի խորհրդի Գլխավոր քարտուղարին ուղղված հայտարարության միջոցով հայտարարել, որ իրեն իրավունք է վերապահում չենթարկվել

վերը նշված 2-րդ կետի համաձայն տեղեկատվություն տրամադրող Կողմի պայմաններին, մինչև չստանա տրամադրվող տեղեկատվության բնույթի վերաբերյալ նախնական ծանուցում և չհամաձայնի դրա փոխանցմանը:

Հոդված 23. Ստորագրելը և ուժի մեջ մտնելը

1. Սույն Կոնվենցիան պետք է բաց լինի Եվրոպայի խորհրդի անդամ Պետությունների, Եվրոպական համայնքի և Կոնվենցիայի մշակմանը մասնակցած՝ անդամ չհանդիսացող Պետությունների ստորագրման համար:

2. Սույն Կոնվենցիան ենթակա է վավերացման, ընդունման կամ հաստատման: Վավերագրերը, ընդունման կամ հաստատման վերաբերյալ փաստաթղթերն ի պահ են հանձնվում Եվրոպայի խորհրդի Գլխավոր քարտուղարին:

3. Սույն Կոնվենցիան պետք է ուժի մեջ մտնի երեք ամսվա ժամկետը լրանալուն հաջորդող ամսվա առաջին օրը՝ այն օրվանից հետո, երբ վեց ստորագրողներ, ներառյալ Եվրոպայի խորհրդի առնվազն չորս անդամ Պետությունները, կհայտնեն իրենց համաձայնությունը սույն Կոնվենցիայով պարտավորված լինելու մասին՝ 2-րդ կետի դրույթների համաձայն:

4. Յուրաքանչյուր ստորագրողի նկատմամբ, որը հետագայում կհայտնի իր համաձայնությունը պարտավորված լինելու վերաբերյալ, Կոնվենցիան պետք է ուժի մեջ մտնի երեք ամսվա ժամկետը լրանալուն հաջորդող ամսվա առաջին օրը՝ այն օրվանից հետո, երբ նա կհայտնի Կոնվենցիայով պարտավորված լինելու իր համաձայնության մասին՝ 2-րդ կետի դրույթների համաձայն:

Հոդված 24. Կոնվենցիային միանալը

1. Սույն Կոնվենցիայի ուժի մեջ մտնելուց հետո Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեն Կոնվենցիայի Կողմերի հետ խորհրդակցելուց և նրանց միաձայն համաձայնությունն ստանալուց հետո կարող է հրավիրել Եվրոպայի խորհրդի անդամ չհանդիսացող և դրա մշակմանը չմասնակցած ցանկացած Պետություն՝ միանալու սույն Կոնվենցիային: Որոշումը պետք է ընդունվի Եվրոպայի խորհրդի Կանոնակարգի 20-դ հոդվածով նախատեսված մեծամասնությամբ և այն Կողմերի ներկայացուցիչների միաձայն քվեարկությամբ, որոնք իրավունք ունեն մասնակցելու Նախարարների կոմիտեի աշխատանքներին:

2. Վերոհիշյալ 1-ին կետի համաձայն Կոնվենցիային միացող յուրաքանչյուր Պետության համար Կոնվենցիան պետք է ուժի մեջ մտնի Եվրոպայի խորհրդի Գլխավոր քարտուղարին միանալու մասին փաստաթուղթն ի պահ հանձնելու օրվանից երեք ամսվա ավարտին հաջորդող ամսվա առաջին օրը:

Հոդված 25. Տարածքային կիրառում

1. Ցանկացած Պետություն կամ Եվրոպական համայնքը կարող է իր վավերագիրը, ընդունման, հաստատման կամ միանալու մասին փաստաթուղթն ի պահ հանձնելու պահին նշել այն տարածքը կամ տարածքները, որոնց նկատմամբ պետք է կիրառվի սույն Կոնվենցիան:

2. Յուրաքանչյուր Կողմ կարող է ավելի ուշ՝ ցանկացած պահի, Եվրոպայի խորհրդի Գլխավոր քարտուղարին ուղղված հայտարարության միջոցով տարածել սույն Կոնվենցիայի կիրառումը հայտարարության մեջ նշված ցանկացած այլ տարածքում: Այդպիսի տարածքի նկատմամբ Կոնվենցիան պետք է ուժի մեջ մտնի Գլխավոր քարտուղարի կողմից հայտարարության ընդունման օրվան հաջորդող երեք ամսվա ավարտից հետո՝ եկող ամսվա առաջին օրը:

3. Նախորդ երկու կետերի համաձայն արված ցանկացած հայտարարություն դրա մեջ նշված ցանկացած տարածքի մասով կարող է հետ վերցվել Եվրոպայի խորհրդի Գլխավոր քարտուղարին ուղղված ծանուցագրի միջոցով: Հետ վերցնելը պետք է ուժի մեջ մտնի Գլխավոր քարտուղարի կողմից նման ծանուցագրի ստացման օրվան հաջորդող երեք ամսվա ավարտից հետո՝ եկող ամսվա առաջին օրը:

Հոդված 26. Կոնվենցիայի ազդեցությունը

1. Սույն Կոնվենցիան լրացնում է Կողմերի միջև գործող՝ կիրառելի բազմակողմ կամ երկկողմ պայմանագրերն ու համաձայնագրերը, ներառյալ Եվրոպայի խորհրդի հետևյալ պայմանագրերի պայմանները.

- «Հանձնման մասին» Եվրոպական կոնվենցիա, որը ստորագրման համար բացվել է Փարիզում. 13-ը դեկտեմբերի, 1957թ. (ETS հմ. 24),

- «Քրեական գործերով փոխադարձ օգնության մասին» եվրոպական կոնվենցիա, որը ստորագրման համար բացվել է Ստրասբուրգում. 20-ը ապրիլի, 1959թ. (ETS հմ. 30),

- «Ահաբեկչությունն արգելելու մասին» եվրոպական կոնվենցիա, որը ստորագրման համար բացվել է Ստրասբուրգում. 27-ը հունվարի, 1977թ. (ETS հմ. 90),

- «Քրեական գործերով փոխադարձ օգնության մասին» եվրոպական կոնվենցիայի լրացուցիչ արձանագրություն, որը ստորագրման համար բացվել է Ստրասբուրգում. 17-ը մարտի, 1978թ. (ETS հմ. 99),

- «Քրեական գործերով փոխադարձ օգնության մասին» եվրոպական կոնվենցիայի երկրորդ լրացուցիչ արձանագրություն, որը ստորագրման համար բացվել է Ստրասբուրգում. 8-ը նոյեմբերի, 2001թ. (ETS հմ. 182),

- «Ահաբեկչությունն արգելելու մասին» եվրոպական կոնվենցիան փոփոխելու մասին արձանագրություն, որը ստորագրման համար բացվել է Ստրասբուրգում. 15-ը մայիսի, 2003թ. (ETS հմ. 190):

2. Եթե երկու կամ ավելի Կողմեր արդեն պայմանագիր կամ **համաձայնագիր** են կնքել սույն Կոնվենցիայի հետ առնչություն ունեցող հարցերի շուրջ կամ այլ կերպ սահմանել են իրենց հարաբերությունները նման հարցերի առնչությամբ կամ կատարելու են դա ապագայում, նրանք պետք է լիազորված լինեն կիրառելու նաև այդ **համաձայնագիրը** կամ պայմանագիրը կամ համապատասխան կերպով կանոնակարգելու այդ հարաբերությունները: Այնուամենայնիվ, եթե Կողմերը հաստատում են իրենց հարաբերությունները, կապված սույն Կոնվենցիայում նշված հարցերի հետ, այլ կերպ, քան դրանում նախատեսված է, նրանք պետք է դա անեն այնպես, որ անհամապատասխանություն չառաջանա Կոնվենցիայի նպատակների և սկզբունքների հետ:

3. Եվրոպայի միության անդամ հանդիսացող Կողմերը իրենց երկկողմ հարաբերություններում պետք է կիրառեն Համայնքի և Եվրոպայի միության կանոնները, եթե գոյություն ունեն խնդրո առարկան կարգավորող և մասնավոր դեպքերի համար կիրառելի՝ Համայնքի և Եվրոպայի միության կանոններ, առանց վնաս պատճառելու Կոնվենցիայի նպատակին ու առարկային և առանց վնասելու վերջինիս ամբողջական կիրառմանը այլ Կողմերի հետ:

4. Սույն Կոնվենցիայում ոչինչ չպետք է ազդի Կողմի և անհատների՝ միջազգային օրենքով սահմանված այլ իրավունքների, պարտականությունների և պատասխանատվությունների վրա՝ ներառյալ միջազգային մարդասիրական օրենքը:

5. Ջինված ուժերի գործողությունները զինված հակամարտությունների ժամանակ, որոնց պայմանները նշված են միջազգային մարդասիրական օրենքի համաձայն, և որոնք կարգավորվում են այդ օրենքով, չեն կարգավորվում սույն Կոնվենցիայով, և որևէ Կողմի ռազմական ուժերի՝ իրենց պաշտոնական պարտականությունները կատարելիս ձեռնարկած գործողությունները չեն կարգավորվում սույն Կոնվենցիայով, քանի որ դրանք կարգավորվում են միջազգային օրենքի այլ կանոններով:

Հոդված 27. Կոնվենցիան փոփոխելը

1. Փոփոխություններ սույն Կոնվենցիայում կարող է առաջարկել յուրաքանչյուր Կողմ, Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեն կամ Կողմերի խորհրդակցությունը:

2. Փոփոխության յուրաքանչյուր առաջարկ պետք է Եվրոպայի խորհրդի Գլխավոր քարտուղարի կողմից փոխանցվի Կողմերին:

3. Ավելին. որևէ Կողմի կամ Նախարարների կոմիտեի կողմից առաջարկված ցանկացած փոփոխություն պետք է փոխանցվի Կողմերի խորհրդակցությանը, որը պետք է Նախարարների կոմիտեն ներկայացնի իր կարծիքը առաջարկված փոփոխությունների վերաբերյալ:

4. Նախարարների կոմիտեն պետք է քննարկի առաջարկված փոփոխությունը և Կողմերի խորհրդակցության փոխանցած կարծիքը և կարող է հաստատել փոփոխությունը:

5. 4-րդ կետի համաձայն Նախարարների կոմիտեի կողմից հաստատված ցանկացած փոփոխության տեքստ պետք է փոխանցվի Կողմերին՝ հաստատելու համար:

6. 4-րդ կետի համաձայն հաստատված ցանկացած փոփոխություն պետք է ուժի մեջ մտնի երեսուներորդ օրն այն պահից, երբ բոլոր Կողմերը Գլխավոր քարտուղարին կտեղեկացնեն իրենց համաձայնության մասին:

Հոդված 28. Հավելվածի վերանայում

1. Հավելվածում ընդգրկված պայմանագրերի ցանկը նորացնելու նպատակով փոփոխությունները կարող են առաջարկվել ցանկացած Կողմի կամ Նախարարների կոմիտեի կողմից: Փոփոխության այդ առաջարկները պետք է վերաբերեն միայն Միավորված ազգերի կազմակերպության համակարգի շրջանակներում կնքված համընդհանուր պայմանագրերին, որոնք առնչվում են միջազգային ահաբեկչության հարցերին և մտել են ուժի մեջ: Դրանք պետք է Եվրոպայի խորհրդի Գլխավոր քարտուղարի կողմից փոխանցվեն Կողմերին:

2. Անդամ չհանդիսացող կողմերի հետ խորհրդակցելուց հետո Նախարարների կոմիտեն կարող է ընդունել առաջարկված փոփոխությունը Եվրոպայի խորհրդի կանոնադրության 20-դ հոդվածով նախատեսված մեծամասնությամբ: Փոփոխությունն ուժի մեջ է մտնում Կողմերին փոխանցելուն հաջորդող մեկ տարվա ժամկետը լրանալուց հետո: Այդ ժամանակահատվածում ցանկացած Կողմ կարող է ծանուցել Եվրոպայի խորհրդի Գլխավոր քարտուղարին փոփոխության ուժի մեջ մտնելու վերաբերյալ այդ Կողմին առնչվող ցանկացած առարկության մասին:

3. Եթե Կողմերի մեկ երրորդը Եվրոպայի խորհրդի Գլխավոր քարտուղարին ծանուցում է փոփոխության ուժի մեջ մտնելուն առարկելու վերաբերյալ, ապա այդ փոփոխությունը ուժի մեջ չպետք է մտնի:

4. Եթե Կողմերի մեկ երրորդից պակաս մասն է ծանուցում առարկության վերաբերյալ, փոփոխությունը պետք է ուժի մեջ մտնի այն Կողմերի համար, որոնք առարկություն չեն ներկայացրել:

5. 2-րդ կետի համաձայն փոփոխության ուժի մեջ մտնելուց հետո, և եթե Կողմը տեղեկացրել է իր առարկության մասին, այդ փոփոխությունը շահագրգիռ Կողմի համար ուժի մեջ է մտնում Եվրոպայի խորհրդի Գլխավոր քարտուղարին ընդունման մասին տեղեկացնելու օրվան հաջորդող ամսվա առաջին օրը:

Հոդված 29. Վեճերի կարգավորում

Սույն Կոնվենցիայի մեկնաբանման կամ կիրառման հետ կապված՝ Կողմերի միջև ծագած վեճի դեպքում նրանք պետք է կարգավորման հասնեն բանակցությունների կամ, իրենց ընտրությամբ, այլ խաղաղ եղանակով, ներառյալ վեճը միջնորդ դատարանին ներկայացնելը, որի որոշումները պարտադիր են վեճի մասնակից Կողմերի համար, կամ Արդարադատության միջազգային դատարանին ներկայացնելը՝ շահագրգիռ Կողմերի համաձայնությամբ:

Հոդված 30. Կողմերի խորհրդակցություն

1. Կողմերը պետք է պարբերաբար խորհրդակցեն՝ նպատակ ունենալով.

ա) առաջարկություններ անել սույն Կոնվենցիայի արդյունավետ օգտագործումն ու կիրառումը հեշտացնելու և կատարելագործելու վերաբերյալ, ներառյալ սույն Կոնվենցիայի շրջանակներում կատարված ցանկացած հայտարարությանն առնչվող խնդիրների և հետևանքների վերհանումը,

բ) ձևակերպել կարծիք հանձնումից հրաժարվելու համաձայնության մասին, որը վերաբերում է իրենց՝ համաձայն 20-րդ հոդվածի 8-րդ կետի,

գ) փոփոխություններ առաջարկել սույն Կոնվենցիայում՝ 27-րդ հոդվածի համաձայն,

դ) ձևակերպել իրենց կարծիքը սույն Կոնվենցիայի ցանկացած փոփոխության մասին, որը վերաբերում է իրենց՝ 27-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն,

ե) արտահայտել իրենց կարծիքը սույն Կոնվենցիայի կիրառման հետ կապված ցանկացած հարցի շուրջ և դյուրացնել տեղեկատվության փոխանակումը նշանակալի իրավական, քաղաքական կամ տեխնոլոգիական զարգացումների վերաբերյալ:

2. Կողմերի խորհրդակցությունը պետք է գումարվի Եվրոպայի խորհրդի Գլխավոր քարտուղարի կողմից ցանկացած ժամանակ, երբ վերջինս դա անհրաժեշտ կհամարի, և ցանկացած ժամանակ, երբ Կողմերի մեծամասնությունը կամ Նախարարների կոմիտեն կպահանջի:

3. Կողմերը պետք է աջակցություն ստանան Եվրոպայի խորհրդի քարտուղարության կողմից՝ իրենց պարտականությունները սույն հոդվածի համաձայն կատարելու առնչությամբ:

Հոդված 31. Չեղյալ հայտարարելը

1. Ցանկացած Կողմ կարող է ցանկացած ժամանակ չեղյալ հայտարարել սույն Կոնվենցիան Եվրոպայի խորհրդի Գլխավոր քարտուղարին այդ մասին ծանուցելու միջոցով:

2. Նման չեղյալ հայտարարումը պետք է ուժի մեջ մտնի Գլխավոր քարտուղարի կողմից նման ծանուցագրի ընդունման օրվան հաջորդող երեք ամսվա ավարտից հետո՝ եկող ամսվա առաջին օրը:

Հոդված 32. Ծանուցում

Եվրոպայի խորհրդի Գլխավոր քարտուղարը պետք է ծանուցի Եվրոպայի խորհրդի անդամ Պետություններին, Եվրոպական համայնքին, Կոնվենցիայի մշակմանը մասնակցած՝ անդամ չհանդիսացող Պետություններին, ինչպես նաև ցանկացած Պետության, որը միացել է կամ հրավիրվել է՝ միանալու սույն Կոնվենցիային.

ա) ցանկացած ստորագրման,

բ) ցանկացած վավերագրի, ընդունման, հաստատման կամ միանալու մասին փաստաթուղթ ի պահ հանձնելու,

գ) 23-րդ հոդվածի համաձայն՝ սույն Կոնվենցիայի ուժի մեջ մտնելու ցանկացած ժամկետի,

դ) 1-ին հոդվածի 2-րդ կետի, 22-րդ հոդվածի 4-րդ կետի և 25-րդ հոդվածի համաձայն արված հայտարարությունների, և

ե) սույն Կոնվենցիային վերաբերող որևէ այլ գործողության, ծանուցման կամ հաղորդագրության մասին:

Ի հավաստումն որի՝ ներքոստորագրյալները, պատշաճորեն լիազորված լինելով, ստորագրեցին սույն Կոնվենցիան:

Կատարված է Վարշավայում 2005թ. մայիսի 16-ին, անգլերեն և ֆրանսերեն լեզուներով. ընդ որում՝ երկու տեքստերն էլ հավասարազոր են, մեկ օրինակով, որը պետք է ի պահ տրվի Եվրոպայի խորհրդի արխիվին: Եվրոպայի խորհրդի Գլխավոր քարտուղարը պետք է վավերացված պատճենները փոխանցի Եվրոպայի խորհրդի յուրաքանչյուր անդամ Պետության, Եվրոպական համայնքին, սույն Կոնվենցիայի մշակմանը մասնակցած՝ անդամ չհանդիսացող Պետություններին, ինչպես նաև դրան միանալու հրավիրված յուրաքանչյուր Պետության:

Հավելված

1. 1970թ. դեկտեմբերի 16-ին Հաագայում ստորագրված «Օդանավերի անօրինական զավթումների մասին» կոնվենցիա

2. 1971թ. սեպտեմբերի 23-ին Մոնրեալում ստորագրված «Քաղաքացիական ավիացիայի անվտանգության դեմ ուղղված ապօրինի գործողությունների դեմ պայքարի մասին» կոնվենցիա

3. 1973թ. դեկտեմբերի 14-ին Նյու Յորքում ստորագրված «Միջազգային պաշտպանությունից օգտվող անձանց, այդ թվում՝ դիվանագիտական գործակալների դեմ կատարվող հանցագործությունները կանխելու և պատժելու մասին» կոնվենցիա

4. 1979թ. դեկտեմբերի 17-ին Նյու Յորքում ստորագրված «Պատանդներ վերցնելու դեմ պայքարի մասին» միջազգային կոնվենցիա

5. 1980թ. մարտի 3-ին Վիեննայում ստորագրված «Միջուկային նյութի ֆիզիկական պաշտպանության մասին» կոնվենցիա

6. 1988թ. փետրվարի 24-ին Մոնրեալում ստորագրված «Քաղաքացիական ավիացիայի անվտանգության դեմ ուղղված ապօրինի գործողությունների դեմ պայքարի մասին» կոնվենցիայի «Միջազգային օդանավակայաններում բռնության անօրինական ձեռնարկումների դեմ պայքարելու մասին» արձանագրություն

7. 1988թ. մարտի 10-ին Հռոմում ստորագրված «Ծովային նավագնացության անվտանգության դեմ ուղղված անօրինական գործողությունների դեմ պայքարի մասին» կոնվենցիա

8. 1988թ. մարտի 10-ին Հռոմում ստորագրված «Մայրցամաքային ելուստի վրա տեղակայված նավամատուցի

անվտանգության դեմ ուղղված անօրինական գործողությունների դեմ պայքարի մասին» արձանագրություն

9. 1997թ. դեկտեմբերի 15-ին Նյու Յորքում ստորագրված «Ահաբեկչական ռմբահարումների դեմ պայքարի մասին» միջազգային կոնվենցիա

10. 1999թ. դեկտեմբերի 9-ին Նյու Յորքում ստորագրված «Ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» միջազգային կոնվենցիա

Հայաստանի Հանրապետության առարկությունը

«Ահաբեկչության կանխարգելման մասին» Եվրոպայի խորհրդի կոնվենցիայի վերաբերյալ Ադրբեջանի Հանրապետության կողմից կատարված հայտարարության դեմ

Ադրբեջանի Հանրապետության կողմից 2005 թվականի մայիսի 16-ին ստորագրված «Ահաբեկչության կանխարգելման մասին» Եվրոպայի խորհրդի կոնվենցիայի վերաբերյալ կատարված հայտարարության վերաբերյալ Հայաստանի Հանրապետությունը հայտարարում է.

Ադրբեջանի Հանրապետությունը միտումնավոր խեղաթյուրում է Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրի էությունը՝ հակամարտության պատճառների և հետևանքների առումով. հակամարտությունը ծագել է Ադրբեջանի՝ Լեռնային Ղարաբաղի բնակչության ազատ կամքի ճնշմանն ուղղված էթնիկ զտման քաղաքականության հետևանքով, որին հաջորդել է լայնածավալ ռազմական ագրեսիան՝ ընդդեմ ինքնորոշված Լեռնային Ղարաբաղի Հանրապետության: Դրա հետևանքով Ադրբեջանի Հանրապետությունը օկուպացրել է Լեռնային Ղարաբաղի որոշ տարածքներ:

Կոնվենցիան Հայաստանի Հանրապետության համար ուժի մեջ է մտել 2016թ. դեկտեմբերի 1-ին